

ՏԵՂԵԿԱՑՈՒ

Կ. Հ. Աղգային ժողովը իւր, Յուլիս 18 նիստին լսելով Երուսաղէմի Յարութիւն պատրիարքի մասին ամբառատանագիրը՝ գաղտնի քուէարկութեամբ 59 քուէով ընդգէմ 5-ի Երուսաղէմի պատրիարքական տեղապահ է ընտրել Աղքանուազօլսի առաջնորդ Տ. Դանիէլ վարդապետ Յակովբեանին (Մշակ № 465.)



Տիմոթէոս Եպիսկոպոս Սափրիճեան, որ ծնուած էր 1822 թ. և Եպիսկոպոս ձեռնադրուած 1878 թ. 88 տարեկան հասակի մէջ վախճանուել է մայիսի վերջին օրերին։ Հանգուցեալը Երուսաղէմի միաբան էր։ Նա աղգային իշխանութեան տնօրինութեամբ Երուսաղէմի լուսարարապետ հանդ. Սահակ Եպիսկոպոսի հետ 1867 թուին մարտի 30-ին Երուսաղէմից դուրս եկաւ և Հարէշտան գնաց Անգլիայ և Հարէշտանի միջև ծագած տարածայնութիւնների պատճառով միջնորդութիւն անելու։ Նա գրեց իւր ուղևորութիւնը, որ տպուած է 1871 թ. Երուսաղէմի մէջ։ Հանդ. Տիմոթէոս Եպիսկոպոսը հղել է Կարսի և Պալքըէսէրի առաջնորդ և իւր վերջին զառամելութեան օրերը անցրել է Ա. Փրկչի հիւանդանոցում։ Հանգուցէ Տէր ի լոյս Երեսաց իւրոց դհոգի հանգուցելոյն։

Նորին Մըրութեան .Տ Տ. Մատքէոս Բ-րդ Կաթուղիկոսի Կ. Պօլսից Ա. Էջմիածին ուղեւորութեան ժամանակ հայ ժողովրդի կողմից աղ ու հաց մատուցած մատուցարանների եւ աղամանների ցուցակը:

1. Մէկ մեծ արծաթեայ մատուցարան մինաներով մակագրութեամբ «Նորին Վեհափ. Հայրապետ և Սրբազնագոյն Կաթուղիկոս Մատթէոս Բ. Իզմիրլեանին Նովոչերկասկի հայ հասարակութիւնից 1909 Յունիս 8.

2. Մէկ մեծ արծաթեայ մատուցարան մինաներով մակագրութեամբ «Նոր-Նախիջևան իւր հիմնադրի Վեհափառաջորդին 1909 Յունիս 8.

3. Մէկ արծաթեայ մատուցարան մակագրութեամբ «Մեծ Սալայի, Փոքր Սալայի և Նիսվիթայի ի յիշատակ չնորհաբեր գալստեան Վեհափառ Հայրապետի ազգիս Տ. Տ. Մատթէոս Բ. Սրբազնագոյն Կաթուղիկոսի. Նախիջևան՝ որդիական ակնածութեամբ կը նուիրաբերի մատուցանո ի հայ հասարակութեանց շրջակայ գիւղօրէից Նոր-Նախիջևանի 1909 Յունիս 8.

4. Մէկ արծաթեայ մատուցարան մակագրութեամբ «Վեհափառ Տէր օրհնէ մեր աղ ու հաց, Թոփթի գիւղի հասարակութիւնից ընծայ՝ որդիական խօնարհութեամբ մատուցանեմ 8 Յունիսի 1909».

5. Մէկ արծաթեայ մատուցարան մակագրութեամբ «Բարով եկար հոգեւոր Տէր, օրհնէ մեր աղ ու հաց՝ Զալթրի շինական հասարակութիւնից 1909 Յունիս 8.

6. Մէկ արծաթեայ մատուցարան մակագրութեամբ «Նորին Վեհափ. Հայրապետին հայոց Մատթէոս Բ. Դեօրկեսկի հայ հասարակութիւնից 1909 Յունիս 8.

7. Մէկ արծաթեայ մեծ մինաներով զարգարուած մատուցարան մակագրութեամբ. «Նորին Վեհափառութեան Մատթէոս Բ. Կաթուղիկոսի ամենայն Հայոց Արմաքիր գիւղաքաղաքի հասարակութիւնից 1909 Յունիսի 11-ին».

8. Մէկ փայտէ մատուցարան կոլոր — մակագրութեամբ «Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոս Մատթէոս Բ.-ին Պետիգորսկոյ հայ հասարակութիւնից 10 օունիսի 1909 ամիս»:

9. Մէկ կոլոր արծաթեայ մատուցարան մակագրութեամբ «Եց-Святъищству Маттеосу II 1909 8 Июня Бакинское Городское Общественное Управление»:

10. Մէկ արծաթեայ մատուցարան մակագրութեամբ «Ամենայն Հայոց Կաթուղիկոս Տ. Տ. Մատթէոս Բ. Երևանայ թեմից 1909 օունիս 28»:

11. Մէկ մեծ փայտէ մատուցարան խլեբъ и соль մակագրութեամբ:

12. Կաւէ մատուցարան խլեբъ и соль վերնգ.

13. Կաւէ, շրջապատը սպիտակ մետաղ մատուցարան:

14. Մատուցարան կաւէ՝ շրջապատ մետաղ սպիտակ:

15. Մատուցարան փոքրիկ փայտէ, նուէր Քրիս. Վերմիշեանի դստեր կողմից:

16. Ազաման արծաթեայ, երկու հատ, մինաններով և 12 հատն զարդարուած քանդակներով, ընդամենայն տասն և չորս հատ:

Վեհարանում մնացին թիւ 6 մատուցարան Գէօրկենոկի հայ հասարակութիւնից նուիրուած և թիւ 13 և 14 կաւէ մատուցարանները,

Պոլսից Վեհափառ Կաթուղիկոսի բերած Պետական
եւ լանջախաչեր:

Եպիսկոպոսական պանագէներ չորս հատ:

Վարդապետական խաչ, Սիրիրի քարերով, մէջտեղը Քրիստոս խաչի վրայ, շղթայտվ և տուփով երկու հատ:

Քահանայական հասարակ խաչ, ոսկեզօծ Ս. Էջմիածնի պատկերով մէջտեղը,

Մայր Աթոռոյս Տպարանական Ժողովը ստացել է Վարդաշէնի Գրիգոր քահանայ Սողոմոնեանցի ձեռքով հինգ ոռւբլի, որ նուիրել է Ա. Էջմիածնին Արէշ գաւառակի Հաջի Աղա-Աէրդ-Բէկ Մամէդ օղլին:

ԺՈՂՈՎՈՐԾՈՒՅԹ ԵՎ ԽԱՐԱՐՈՒՅԹ

Նամակ խմբագրութեան.

Յարգելի խմբագրութեան «Արարա» ամսագրի

Ա. Պետերսուրդում բնակւող կապիտան Մ. Խ. Խուբեանց 3-4 տարիներից հետ է փոխադրում է յանուն կառավարութեանս, յօդուտ Մ. Աթոռի, իր սրտաբուզի նուէրը իսկ սոյն 1909 թ. փոխադրել է երկու նուագում յիսուն ռուբլի նոյն նպատակով։ Վանական կառավարութիւնը իր ժամանակին ուղարկելով պատշաճ անդորրագիր, սորանով յայտնում է իր չնորհակալիքը յարգելի կապիտանին, առ Մայր Աթոռն ունեցած իր այդ նուիրական ուժամբ համար։

Կառավարութիւնս խնդրում է յարգելի խմբագրութեանդ հրատարակել այս մասին «Արարատի» մերձակայ համարում։ —

Նախադահ Վանական կառավարութեան Ղեւոնդ Նպիսկոպոս

Խնդրում եմ յարգելի խմբագրութեանդ հրատարակել «Արարատի» մերձակայ համարներից մինում հետևեալը։

Եմ խնդրանաց համաձայն Մասկվայի հայ գաղութի հովիւ Արժանապատիւ Տ. Էմմանուէլ քահանայ Նազարեան ուղարկել է ի գործադրութիւն Մայր Տաճարի ընտիր մեղրամոմ երեք փութ, որոց արժէքը հոգացել են նոյն գաղութի անդամներ Պ. Պ. Մովսէս Գալստեան Բուգազեան 100 ռուբլիով, Ղազար Գալստեան Յակովեան և Եղիա Կարապետեան 0 գաբաշեան 25-ական ռուբլիով, ընդամենն 150 ռուբ։

Մոմերի ստացման մասին յայտնելով ի գիտութիւն Արժ. Էմմանուէլ քահանայի և յարգելի նուիրատուների, յայտնում եմ իմ ջերմ չնորհակալիքս և լաւագոյն ըարեմաղթութիւններով վերոյգրեալ անձանց, որոնք իրենց նիւթական միջոցներով օժանդակ եղան Մայր Աթոռի պայծառութեան

Մայր տաճարի Լուսարարապետ՝ Ղեւոնդ Նպիսկոպոս,